Գրեալ ծաղկեցաւ ձեռամբ նըւաստ եւ անըժն
Որդւոյ Բարաղամ դըրչի Միխայլ վերձայնկն
Զձեզ աղաչեմ հարք եւ եղբարք իմ անծկկան
Ի սբ մաղթանս արժանի առնել ըզմեզ յիշման ։
Ի յաւուրքս յայս նստէր յաթոռն արհիական
Տէր Յակոբոս Ջուղայեցին հայր սըրբազան ։
Իսկ եւ ի սըն Եմ գահ տրունեան
Եղիազար Կաթողիկոս այր պատուական ։
Եւ ի քաղաք Սեբաստիա ի սուրբ Նշան,
Տէր Մելքիսէթ բարունապետն ածաբան ։
. . . .

Թուական նշանակուած է՝

«ՉԵ Ռ ԴԻԺ» (=80+5+1000+4+20 +10=1119, 1119+551=1670) ։ Բարաղամ դրիչը յայտնի է մեզ իր Յայսմաւուրքով ։

Ստացողն է Մարկոս ժամկոչ Ջաղացապան, որի պատկերն էլ նկարուած է, Յիսուսի առաջ ծունկ չոքած ։

Այս աւետարանի Սեբաստիայի կամ Բալթիմորի No. 539 ձեռագրից արտանկարուիլը ոչ միայն պատկերներով կարելի է ապացուցանել, այլ եւ յիշատակութիւն ունի այս մասին Միքայէլ դրիչը՝ հրաշալի բոլորգրով. եր. 7.

Աղաչեմ յիշել եւ զպատուական
դրիչն Թորոս՝ մականուն Ռոսլին
կոչեցեալ զծաղկող օրինակիս. եւ
զստացօղն զԹորոս քահն ։ որ ի ժա
մանակս Թգրին Հեթմոյ, եւ 'ի
հրպուեն տն Կոստանդեայ, ի Հռոմ
կլայն. ի Թըւին. չճժա. (=1262) ։
այլ եւ զմահտեսի Տօնիկ ժամկոչն, որ
երախտաւորեաց մեզ ի Սեբաստիա,
ի ծայրաքաղ առնելն ի յօրինակէն, զհա
մարաբբասս.

* * *

Նոյն 1262 թուականից ունինք Թորոս Ռոսլինի չորրորդ գործը, իսկ Կոստանդնի ժամանակի տասներորդը, որ Երուս.-ի No. 2660/105 մագաղաթեայ, բոլորգիր աւետարանն է ։ Գրիչն է Աւետիս քահանայ, իսկ նկարիչը Թորոս Ռոսլինը ։ Վերջինս, թէեւ ունի ձեռքով գրուած ձեռագիրներ, բայց սորա բոլորգիր գրչութիւնը համեմատաբար պակաս գեղեցիկ է, քան Աւետիս քահանայինը, որ Կիլիկեան շրջանի առաջնակարգ գրիչներից մէկն էր, որ գրել է նաեւ Երուս. No. 2563 արքայական աւետարանը, որ կը տեսնենք յետոյ ։ Թորոսի այս գործը գրուած ՉԺԱ= 1262 թուականին «հրամանաւ մեծի եւ բարեպաշտի եւ իշխանաց իշխանին պարոն Լեւոնի Աստուծով որդւոյ քրիստոսապսակ եւ սուրբ արքային Հեթմոյ թագաւորի ամենայն Հայոց» ։ Ձեռագիրը խորանների, աւետարանիչների պատկերների, սկզբնազարդերի հետ տալիս է մի շատ թանկագին, պատմական մանրանկար դահաժառանգ Լեւոն Գ.-ի եւ Կեռանի, նկարուած նրանց ամուսնութեան առթիւ ։ Ափսոս, միայն, մի անպիտան ձեռք մասամբ եղծել է Լեւոնի դէմքը (Պատկ. 7) ։ Մենք ունինք սորա գունատիպ, իսկականից արտանկարուած օրինակը, հանգուցեալ տաղանդաւոր նկարիչ Եղիշէ Թադէոսեանի ձեռքով, որ ընկերացել էր մեզ 1914 թուին դէպի Երուսաղէմ մեր կատարած հնագիտական ճանապարհորդութեան, այնտեղի ձեռագիրների մէջ պահուած արքայական եւ իշխանական մանրանկարները մեր Մանրանկարչական մեծ գործի համար արտանկարելու ։ Հանդերձանքը վերին աստիճանի հետաքրքրական, բիւզանդականի նմանութեամբ, որի մանրամասն նկարագրութիւնը վերապահում ենք վերեւ յիշուած գործի մէջ տալու ։ Տալիս ենք եւ խորաններից մէկը. (Պատկ. 8) ։

Աւետարանի յիշատակարանները կարեւոր ոչ միայն Ձեռագրի ծագման, այլ եւ պատմական դէպքերի նկատմամբ ։ Կան եւ յետագայ ժամանակների հետ կապուած յիշատակարաններ, որ քաղուածօրէն տուել է Մեսրոպ Եպիսկոպոս ։*

* * *

Ժամանակագրական կարգով Թորոսի հինգերորդ գործն է Երուսաղ. No. 1956 աւետարանը, Կոստանդին Կաթուղիկոսի ժամանակի տասն եւ մէկ երորդը ։ Ձեռագիրը գրուած է 1265 թուին եւ նկարազարդուած է Թորոսի ձեռքով. տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք յիշատակարանների արտագրութիւններն ու Ձեռագրի նկարագրութիւնը, այլ օգտուում ենք պատկերների լուսանկարներից եւ թեթեւ նկատողութիւններից ։ Այստեղ տալիս ենք ընծայականի խօսքերը, որ կարդացել ենք լուսանկարներից. 11բ.

Որ նուիրեաց զնիւթ տառի
Քեզ տր համայն, պարգեւողի
Կերաննայի քո ծառաի կե
Նաց բանից փափագաւղի
Զոր արարեր տր արժանի բա
ռնալ զկարդ ճգնաւորի
յորժամ փառաւք գաս հայրենի
Ընդ սրս ընդալ յառագաստի

*Ազգ. Հանդէս XXIV. եր. 69 եւ շար. ։